# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«06» 11 2012 թ. N 84

ք. Արմավիր

### *ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 18-ի N1304-Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգինայի, Արևիկի, Հայկաշենի, Նոր Արտագերսի և Բաղրամյանի գյուղական համայնքների գյուղապետարանում ընդունման-հանձնման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

***կարգադրում եմ՝***

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Վ. Մկրտչյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 15 աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հանձնաժողովին (Վ. Մկրտչյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգինայի, Արևիկի, Հայկաշենի, Նոր Արտագերսի և Բաղրամյանի գյուղապետարանների աշխատակազմերի համապատասխան մասնագետներին (համաձայնությամբ):
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանին:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

***ՄԱՐԶՊԵՏ՝*** ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*
*2012 թվականի նոյեմբերի 29-ի*
*N 84 կարգադրության*

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

***Հանձնաժողովի նախագահ՝***

Վ. Մկրտչյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ.

***Անդամներ՝***

Գ. Գևորգյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ.

Լ. Հարությունյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի գլխավոր մասնագետ.

Ս. Սարգսյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ:

***Հանձնող՝*** Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգինայի, Արևիկի, Հայկաշենի, Նոր Արտագերսի և Բաղրամյանի գյուղական համայնքների ղեկավարներ.

***Ընդունող՝*** Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգինայի, Արևիկի, Հայկաշենի, Նոր Արտագերսի և Բաղրամյանի գյուղական համայնքների նորընտիր ղեկավարներ:

***ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***